

տեպիլի գորգ, կը գտնուի Լոնտոնի Սաութ Քէնսինկլթընի թանգարանին մէջ: Շատ բան գրուած է այս մեծ ու ընտիր գորգին մասին: Ուրեմն շինուած է Շահ Թահմապի (1525-1576) օրով, այսինքն Սաւաֆեանց շրջանին:

Գորգը մինչև նախորդ դարու վերջերը կը պատկանէր Արտեպիլի մզկիթին, սակայն յայտնի չէր թէ Արտեպիլ թէ Գեշան շինուած է: Արթըր Աֆհամ Փոփ այդ մասին կը գրէր թէ «այդ գորգը փոխանակ Արտեպիլ հիւսուած ըլլալու՝ իրապէս Գեշան հիւսուած է, մեծապէս հաւանական կը թուի երբ նկատի առնենք գործնական պայմանները, որոնց ներքեւ մեծ գորգ մը պէտք է հիւսուի, այս կէտը գորգերու մասին շատ մը գրողներէ վրիպած է: Նախ եւ առաջ մինակ մարդ մը չէր կրնար շինել երկու Արտեպիլ գորգեր՝ քանի մը կենաց շրջանի իսկ: Այսպիսի աշխատութիւն մը կը կարօտի մեծ եւ բարձրօրէն կրթուած աշխատակիցներու, վարպետին կամքին հետեւելու վարժուած, բուրդ գլողներ, մանողներ, ոտայն կապողներ, եւ հիւսողներու մեծ խումբ մը: Նման կազմ մը հեշտութեամբ Պարսկաստանի նման երկրի մը մէջ մէկ տեղէ միւսը տանիլ կարելի չէր: Գորգերու անզափոխութիւնը, նոյնիսկ ասկէ մեծ եւ աւելի ծանր սովորական բան մըն էր: Երկրորդ, կապերտ հիւսողը մասնաւորաբար ամբօրէն կապուած է երկրին եւ ազատ չէ թափառելու, ինչպէս բազմաթիւ բանաստեղծներ, գեղագիրներ, կաւադործներ, մետաղադործներ, երկրաչափներ ըրին, նոյն առեւն նոյն ներկին կազմազիրը զարմանալիօրէն տարբեր արդիւնք պիտի տար նոյնիսկ դրացի գիւղերուն մէջ, շնորհիւ ջուրերուն քիմիական տարբեր բաղադրութեանց: Ժամանակակից վրկայութիւններ ցոյց կու տան որ ասիկա նոյնքան ճիշտ էր ԺԶ դարուն՝ որքան այժմ: Աւելին կայ, ներկարարութիւնը մասնազիտական եւ զադանաթաքոյց արհեստ մըն էր, որով բացի ջուրի տարբերութենէն, անհաւանական է որ շրջանի մը ներկարարները ունենան ճիշտ նոյն գոյները, որոնք կը գտնուին տարբեր շրջանի մը մէջ: Այսպէս, հիւսող մը որ սորված է իր գոյներու դասաւորումը շրջանի մը մէջ եւ վարժուած որոշ երանդներու, լրջօրէն ձեռնակապուած պիտի ըլլար երբ ուրիշ շրջանի մը մէջ կատարեալ արդիւնք ձեռք բերել ջանար: Երրորդ, միայն լաւ հաստատուած եւ փորձառու հիւսողի մը պիտի վստահուէր այսպիսի կարեւոր ապսպրանք մը: Գեշանցի Մաքսուտ պէտք է որ իր արհեստին մէջ նշանաւոր մէկը եղած ըլլար, մեծ եւ բարձրօրէն կազմակերպուած աշխատանոցի մը տնօրէն: Նուազագոյն կարողութեամբ հիւսողներ կարելի է որ հեռուոր դաւառներու մէջ առիթներ փնտռէին, հակառակ արքունիքէն իրենց ունեցած հեռաւորութեան, նաեւ հակառակ շրջանի դժուարութեանց եւ նորութեանց, սակայն հաւանական չէ որ մեծահամբաւ մէկը, ինչպէս ըլլալու էր Մաքսուտ, հեռանար Գեշանէն, Պարսկաստանի մեծագոյն կեդրոնը այդ առեւտուան հիւսուածեղէնի արուեստին: Համարուող կեր-